ՍԱՐՈ ՔՈՉԱՐՅԱՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐ

Արտասանության դասավանդման մեթոդներում ի հայտ եկող նորամուծությունները բխում են օտար լեզվի դասավանդման մեթոդների ընդհանուր նոր տենդենցից, այն է՝ ընդգրկել դասավանդման գործընթացում հաղորդակցական մոտեցումներ: Ավելին, առկա մեթոդները իրենց վրա են կրում հոգեբանության, նյարդալեզվաբանության և դրամայի[1] (C. Wessels & K. Lawrence 1997) տեխնիկաների ազդեցությունը: Հոդվածի նպատակն է վերհանել գործնական հնչյունաբանության ուսուցման նորագույն որոշ մոտեցումներ և անդրադառնալ դրանց ընդհանուր բնույթին:

Այսօր երկրորդ օտար լեզվի արտասանության շատ դասավանդողներ փորձ են անում շրջանցել ավանդական արտասանական լսարանային փորձը, ինչպիսին է, օրինակ, կրկնողական ուսուցումը, հիշողական առաջադրանքները, արտասանական համակարգի կամ տառադարձության նկարագրությունները: Հաղորդակցական մոտեցման առաջ գալուց ի վեր, որով առաջնորդվում է օտար լեզվի դասավանդման միջազգային ամբողջ համակարգը, արտասանության մեթոդաբանությունը սկսել է որդեգրել խոսույթամետ մոտեցումներ: Ի հավելումն՝ արտասանության ուսուցման գործընթացում զուտ հնչյուների ճիշտ արտաբերման ուղղվածություն ունեցող դասավանդումը փոխվել է առոգանությանը և հնչերանգին ուղղված դասավանդման, որի նպատակն է բարելավել ընդհանուր ընկալումը: Արտասանության այսօրվա դասընթացներն արտացոլում են ավելի լուրջ մոտեցում առոգանության և հնչերանգի նկատմամբ, որը սերտորեն կապված է հնչյուների ճիշտ արտաբերման հետ: Ինչևէ, միաժամանակ արտասանությունը անտեսեց հնչյունի, գործառույթի և իմաստի միջև եղած փոխգործողությունը՝ շեշտը դնելով միայն հնչյունների ճիշտ արտաբերման և հնչերանգային կաղապարների վրա: Ներկայումս արտասանության ուսուցման սահմանները լրջորեն հարցականի տակ են դրվում, քանի որ ճշգրտությունն ու սահունությունը համարվում են չափազանց փոխպայմանավորված: Հետևաբար սահունության վրա հիմնված հաղորդակցական մոտեցումները ավելի և ավելի են ներխուժում արտասանության դասավանդման

[1] Լեզվակրի հնչերանգի և արտասանության կրկնօրինակում ներկայացումների միջոցով:

գործընթաց, մասնավորապես դասի նախնական հատված՝ նախավարժանք-ների տեսքով:

Գործնական հնչյունաբանության դասավանդման ներկայիս մոտեցում-ները հակված են մշակել լեզվակրի մի ավելի իրական ձայնային որակ կամ սարք, որին հնարավոր չէ հասնել տիրապետելով միայն հնչյունային համա-կարգի ճշգրիտ արտասանությանը: Ձայնի որակը վերաբերում է տվյալ լեզվին բնորոշ հատկանիշներին, ինչպիսիք են ձայնի բարձրության մակարդակը, լեզվի չեզոք դիրքը և մկանային ակտիվության աստիճանը, ինչը բխում է արտասանական օրգանների առանձնահատուկ եղանակով օգտագործումից: Ընդհանուր հատկանիշները, որոնք նպաստում են անգլախոս լեզվակրի ձայնի որակին ներառում են ըմպանի դիրքը, որը չեզոք է կամ թեթև ներքև իջած, որը ձայնը դարձնում է ավելի ջերմ և հնչեղ: Ըմպանը օգտագործվում է հատկապես ցածր լարվածությամբ, ուստի անգլերեն հնչյունները բավական հանգիստ են: Կոկորդը նույնպես բավական չեզոք է և հանգիստ, բացառությամբ լեզվի ծայրամասին, որը հակված է լինել շատ ակտիվ, հաճախ շարժվելով դեպի լնդերբ (Jenner 1997): Այն ուսանողների համար, ովքեր ուզում են հնչել իսկա-պես անգլերեն կարևոր է տեղեկանալ այս բնորոշ հատկանիշների մասին և փորձել փոխել իրենց իսկ ձայնի որակը: Դրան կարելի է հասնել բազմաթիվ վարժությունների միջոցով, որոնք ներառում են անգլերեն խոսելիս օգտագործ-վող արտասանական շարժումների դիտարկում և կրկնօրինակում: Հետևյալ տեխնիկաները կարող են օգտագործվել զարգացնելու համար անգլերեն ձայնի որոշ ընդհանուր հատկանիշներ՝ խոսել շրթունքների միջև որևէ թեթև առարկա տեղադրելով (օր.՝ գրչի փականը), որը ցույց է տալիս անգլերեն խոսելիս բերա-նի բացվածքի փոքր աստիճան, օգտագործել հորանջող ձայն անգլերեն կար-դալիս՝ ըմպանի դիրքը իջեցնելու համար, կիրառել շնչառական վարժություն-ներ՝ ստանալու համար անգլերեն ձայնի համարյա ընդհանուր անկաշկան-դություն, արհեստականորեն երկարացնել երկար ձայնավորների և երկբար-բառների տևողությունը արտասանված համատեքստում: Օր.՝ «I'll see to the tea», «How now, brown cow?»: Քանի որ երկար ձայնավորները անգլերենում սերտորեն կապված են մկանային անկաշկանդության հետ, արտասանել ռիթ-միկ նախադասություններ հաճախ հանդիպող /t/, /d/ կամ /n/ հնչույթներով, վար-ժեցնել լեզվի ծայրամասը՝ լնդերքին հպվելու համար, օր.՝ «Tip this tin into the bin»:

Ուսանողներին նաև առաջադրանք է տրվում արտաբերել ավելի վստահ հնչող ձայներ՝ փոխելով ձայնի աստիճանը, արագությունը, տեմբրը, որպեսզի զարգացնեն ավելի ճշգրիտ հնչող անգլերեն ձայնի որակ:

Գործնական հնչյունաբանության դասավանդման գործընթացում շատ հետաքրքրական է դրամայի ձայնային տեխնիկայի նեղմուծումը, քանի որ դա կարող է շատ արդյունավետ լինել ուսանողների համար, քանի որ նրանք հնարավորություն կունենան վերահսկել իրենց իսկ արտաբերումը և քարացած արտասանությունը: Այս տեխնիկաները հիմնականում նախատեսված են վարժեցնելու խոսքի օրգանները լեզվի վարժությունների միջոցով և բարձրացնելով ձայնի աստիճանը՝ հնչերանգային վարժությունների միջոցով:

Դրամա ձայնի մոդուլացիայի տեխնիկաները զվարճալի են և դրանք նաև օգնում են նվազեցնել սթրեսը, որը հաճախ այդպես է օտար լեզվով խոսելու ժամանակ: Արտասանական դասերին ամենակիրառելիների վարժանքներից են. արտասանական վարժություններ, որոնք հաճախ կոչվում են ձայնալարային վարժանքներ, քանի որ դրանք օգնում են վարժեցնել բերանի և լեզվի մկանները՝ նպաստելով ավելի պարզ խոսքի արտաբերման: Դրանց թվին են պատկանում շուտասելուկները, օր.՝ «She sells sea shells on the sea shore»: Դրամա տեխնիկան ընդգրկում է նաև երկխոսությունների բեմադրում: Զգայական ներգրավվածությունը և համատեքստը տանում են ինքնագնահատականի բարձրացման և հաղորդակցական հմտությունների բարելավման: Բեմադրելիս ուսանողները սովորաբար գերազանցում են խոսքի՝ իրենց համար նորմալ սահունությունը և մասնավորապես բարելավում հնչերանգը:

Ապացուցված է, որ արտասանությունը շատ զգայուն է զգայական գործոնի նկատմամբ (Brown, 1995) և որ դրա բնույթը մեծապես կապված է ուսանողների էգոյի, էության և ինքնավստահության մակարդակների հետ: Ուստի, գործնական հնչյունաբանության ուսուցման նոր ուղղությունները շեշտը դնում են զգայական դաշտի վրա հիմնված ուսուցման վրա՝ ի հակակշիռ ուսուցման ավանդական մտավոր և ինտելեկտուալ ուղղվածության: Իդեալական զգայական ուսուցման աստիճանը ձեռք է բերվում, երբ մարդը ֆիզիկապես անկաշկանդ է, էմոցիոնալ առումով հանգիստ և մտավոր առումով զգոն: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ վստահության աստիճանը նպաստում է հնչյունների արտասանության ճշգրտությանը: Հետևաբար անկաշկանդ ուսանողների հետ ընկերական միջավայրը ժամանակակից արտասանության դասավանդման առանցքային հիմնախնդիրներից է: Սթրեսի նվազեցման արդյունավետ մեթոդները, որոնք կապված են արտասանական վարժվածության և էլ ավելի սովորողների զգացմունքների հետ, հիմնված են դրամայի տեխնիկաների կիրառման վրա: Դրանց շնորհիվ սովորողների խոսքը դառնում է ավելի արտահայտիչ, և նրանք ավելի շատ են ցանկանում փորձարկել հնչյունները կամ հնչերանգային կաղապարները: Ըստ ընդունված մեթոդի դասի շրջանակներում դրամայի տեխնիկաների միջոցով անհրաժեշտ է

ուսանողին ներշնչել ձեռք բերելու անգլիական կամ ամերիկյան էություն և ձևավորել լեզվակրի ուժեղ առոգանություն՝ կարծես վերածվելով մի ուրիշ դրամատիկ անձնավորություն:

Նյարդալեզվաբանական ծրագրավորումը արտասանության նորագույն դասավանդողների կողմից ջատագովվող մեկ այլ հեռանկար է, որպես արդյունավետ գործոնների մի համակարգ, որոնք միտված են արտասանություն սովորելը և հնչյունների ճշգրիտ արտաբերումը հեշտացնելու: Նյարդալեզվաբանական ծրագրավորումը կաղապարների և ռազմավարությունների հավաքածու է, որը լուսաբանում է մտքի աշխատանքի, մարդու գործելակերպի և արձագանքման մեխանիզմների հետ կապված հակասությունները: Նյարդալեզվաբանական ծրագրավորման հիմնական խնդիրներն են նյարդատրամաբանական գործընթացները: Ըստ նյարդալեզվաբանական ծրագրավորման՝ մտքի ցանկալի վիճակն այն է, երբ սովորելու գործընթացը բնական կերպով է ընթանում: Այն կարող է նաև իրականացվել լիցքաթափման տեխնիկաների միջոցով, ինչպես օրինակ՝ շնչառական վարժություններ կամ աուտոգենային վարժանք, որը դարձնում է սովորողներին զգայական առումով հանգիստ և մտավոր առումով զգոն և միևնույն ժամանակ օգնում է հաղթահարելու իրենց էգոյի սահմանները: Հետազոտությունը փաստում է, որ ուսանողներին ամեն դասի սկզբում լիցքաթափելու դեպքում նրանց ուսուցումը կբարելավվի 25 տոկոսով (R. Bolstad 1997): Նյարդալեզվաբանական ծրագրավորման հեռանկարը կարևորում է դասախոսի և ուսանողի միջև միջանձնային հարաբերությունները: Երկրորդ օտար լեզվի արտասանության սովորելու գործընթացում հատկապես կարևոր է ներշնչանքի գործոնը (G. Lozanov, 1979): Murphey-ն և Bolstad-Á (1997) սահմանում են այն որպես մշտական հոգեկան վիճակ, ներշնչելու ցանկություն, որը նպաստում է ուսանողի վիճակի բարելավմանը: Հետևաբար, այն, թե ինչպես են դասախոսները խոսում լավ արտասանություն ձեռք բերելու մասին և առաջադրանքները, որ տրվում են ուսանողներին գիտակցաբար կամ ենթագիտակցաբար ներառում են կարևոր հաղորդակցական և ներշնչման կաղապարներ: Նյարդալեզվաբանական ծրագրավորումը օգնում է լեզուն ավելի արդյունավետորեն օգտագործելու, այնպես որ հաջողություն ներշնչելով մենք կարող ենք ցանկալի արդյունքների հասնել: Արտասանության բարելավման այլ տեխնիկաները, որ նյարդալեզվաբանական ծրագրավորման հեռանկարից են որդեգրվել, ներառում են տեսողական տեխնիկաներ /հնչյունի կամ հնչյունաբանական գործընթացի վիզուալիզացում/, նպատակ ունենալով նոր նյարդալեզվաբանական ուղիներ կառուցելու միջոցով դրանք ավելի լավ մտապահել. վերաձևավորում (փոխել մեկի ունեցած

փորձի իրավիճակը, օրինակ՝ կրկնօրինակել, թե ինչպես է լեզվակիրը խոսում մեր մայրենի լեզվով):

Հոդվածում ներկայացված գործնական հնչյունաբանության ուսուցման բազմաթիվ նոր զարգացումներ ունեն շատ ընդհանուր հատկանիշներ: Այսօր գերակշռում է միջդիսցիպլինար մոտեցումը, որը կարևորում է տարբեր զգայարանների դերը, օգտվում է դրամայի և ձայնի արտաբերման տեխնիկաներից և հաշվի է առնում զգայական գործոնը, ինչպես նաև հանրահոգեբանական տարրերը՝ անձը, էգոն, ինչպես նաև միջանձնային հարաբերությունները և դրանց սահմանները: Հոդվածում զետեղված նոր մոտեցումները և մեթոդները օտար լեզվի արտասանություն դասավանդողներին կտրամադրեն գործնական բազմաթիվ նորագույն տեխնիկաներ և աղբյուրներ, կօգնեն նրանց ընդլայնելու ավանդական լսարանային փորձը և հետևաբար արտասանության ուսուցման գործընթացում հասնելու ավելի լավ արդյունքների: